

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների պատմության վերաբերյալ խեթական սեպագիր աղբյուրները արտակարգ կարևոր են այն առումով, որ շատ դեպքերում դրանք միակ գրավոր վկայություններն են: 1920-ական թվականներից հրատարակվող այդ աղբյուրների շնորհիվ, անցած ժամանակահատվածում, ուսումնասիրվել են մ.թ.ա. II հազարամյակում գոյություն ունեցած քաղաքական միավորների պատմության, էթնիկական, սոցիալական իրավիճակի և հոգևոր մշակույթի բազմաթիվ խնդիրներ: Վերջիններիս հետ խեթական տերության փոխհարաբերություններն արտացոլող մեծածավալ տեքստերը¹ անցած տասնամյակներում հարստացան կցաբեկորներով², որոնց շնորհիվ ճշգրտվեցին նախկին ընթերցումները, ի հայտ բերվով լրացուցիչ տեղեկություններ: Սակայն Խաթթուսասի պալատական պահոցի ընձեռած հնարավորությունները, թերևս, սահմանափակ են և նոր, նախկինում անհայտ հիմնարար տեքստեր հազիվ թե սպասեն իրենց հայտնագործողին:

Արդի ժամանակաշրջանում, Հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը ստանում է որոշակիորեն նոր ուղղվածություն: 1970–90-ական թթ. Փոքր Ասիայի տարբեր շրջաններում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվեցին նոր տեղական սեպագրական արխիվներ³, որոնց հրատարակությունը միայն նոր է սկսվել⁴: Սրանք գերազանցապես նամակներ են, առաքված արքունիք կամ այնտեղից ստացված: Չգալի թիվ են կազմում վարչական և ծիսա-պաշտամունքային տեքստերը. վերջիններիս մեջ

կան նաև խուրրիներեն տեքստեր: Այստեղ կան նաև հայագիտության համար զգալի հետաքրքրություն ներկայացնող նյութեր:

Ստորև ներկայացվող տեքստը հայտնաբերվել է 1970-ական թթ.՝ Մաշատ-հյոյուքից (խեթ. ^{1RO}Tapigga)⁵: Արխիվի առաջին հրատարակության մեջ այն տեղ չի գտել զգալի վնասվածքների, ինչպես նաև նամակագրի և հասցեատիրոջ անունների անորոշության պատճառով⁶, հրատարակվելով միայն 1991թ.⁷: Այն մեկ աղյուսակից կազմված նամակ է, որի Դիմային կողմին (ԴԿ) պահպանվել է 7 տողերի վերջը, իսկ Հակադիր կողմին (ՀԿ)՝ 27 տող: ԴԿ-ի տեքստի մեծ մասը, ինչպես նաև ՀԿ-ի տողերի սկզբնամասը հրդեհի հետևանքով գրեթե ամբողջությամբ կորսված են:

Mašat N. 96

Գիտական տառադարձում

ԴԿ

1. ') [.....-r]a?
2. ') [.....e]-eš-tu
3. ') [.....-a]n
4. ') [.....]-an-zi
5. ') [.....]ša-ra-a tar-na
6. ') [.....] x še-ir
7. ') [.....]-te

ՀԿ

1. ') [.....] x x [.....]
2. ') [.....] x x n[u] SI[G₅-i]n SES ^mTa-pa-li-ia
3. ') [pa-ra-a ne-e]h-hu-un nu a-pí-e-da-ni KUR-e a-pa-a-as
4. ') [.....] x ša-ra-a I-NA KUR.UGU i-it
5. ') [a-pí-i]d-[d]a-n[i] ud-da-ni-i EGIR-an ti-ia
6. ') [.....] x-ni ú-[w]a-si nu-ut-ta ku-e ku-e wa-aš-tul x-x [...]
7. ') [.....] x x KUR-[i]a-[a]z a[n]-da II-ŠU III-ŠU

8. ') [.....] p[ɪʔ]–eʔ [...] x ^{GI5}TUKUL [K]UR–ia–az
9. ') [pa–ra–a pɪ–hu–te–s̃]i
10. ') [.....] x [k]i–[i]t pa–an–d[a]–la–az–pɪt EGIR–an ti–ia
11. ') [.....] x x k[i–i]t pa–an–ta–la–za–pit
12. ') [..... a–ša–a]n–du ũ–wa–s̃i /–NA KUR ^{URU}Ha–a–ia–s̃[a]
13. ') [pa–a–i–š̃i] n[a–a]t–kán pɪ–e–di ha–an–da–a–an–te–es
14. ') [a–ša–an–du.....–a]t–ta ũ–iz–zi EG[IRʔ] ^{dUTU}^{SI}
15. ') [ti–ia–az–zi] [n]u–[z]a ũ–wa–s̃i ERIN^{MES.HLA} ni–ni–in–ku–wa–an–z[i]
16. ') [pa–a–i–š̃]i
17. ') [ERIN^{MES} KUR.KUJR^{MES} KUR.UGU^{TIM} KUR ^{URU}Iš–hu–pɪ–it–ta
18. ') [...KUR ^{HUR S̃}^{AGS̃}Ša–ka[d]–du–nu–wa KUR ^{URU}Sa–na–hu–it–t[a]
19. ') [.....] x KUR [^U^{RU}Tu–u–pa–az–zi–ia
20. ') [KUR ^{URU}La–h]u–u–wa–za–an–ti–ia KUR ^{URU}I–s̃u–wa
21. ') [.....] x–ia [k]u–[i]t ku–it ŠA KUR.UGU^{TIM}
22. ') [ERIN^{MES.HLA} na–as hu–u–ma–an–du–uš̃ ni–ni–i[k]
23. ') [...] x K[UR.K]UR^{HLA} wa–a–tar–na–ah im–ma
24. ') [...] x u–wa–mi ^{dUTU}^{SI} ha–at–ra–a–mi
25. ') [...n]iʔ–niʔ–i[kʔ]–zi QA–TAM–MA e–ip–s̃i
26. ') [.....] x na–[aš̃–t]a an–tu–uh–š̃u–uš̃
27. ') [.....p]a–r[a]–a ne–[eh–hi]
- 28.

Թարգմանություն

ԴԿ

1. ') [.....
2. ') [.....ե]ղիք,
3. ') [.....
4. ') [.....] (թող) նրանք [.....]–ն,
5. ') [.....] թող վեր
6. ') [.....] վեր
7. ') [.....

ՀԿ

1. ') [.....

2. ') [.....] Այ[ժմ] (ամեն ինչ) լա[վ] է: Տապալիյայի եղբորը
 ես
3. ') [այնտեղ ուղարկեցի]: Եվ այդ երկիրն աս
4. ') [զնաց⁷...] Դու զնա Վերին երկիր,
5. ') [այդ բանը նրանց ամօշն դիր:
6. ') [.....] դու կ[զ]աս: Եվ ինչ էլ որ լինի, մեղքը քեզ [.....]
7. ') [.....] ե[ր]կրում երկու անգամ, երեք անգամ
8. ') [.....] երկրից զենք
9. ') [կրերես]:
10. ') [.....ա]յդ պահից օգնիր:
11. ') [.....ա]յդ պահից
12. ') դու պիտի [.....լին]ես: Դու կզաս: Հայաս[ա] երկիր
13. ') [դու կզնաս]: Ե[վ] դու (այդ) տեղը կարգի
14. ') [կրերես... Եվ] դու կզաս (ու) Արևիս եա[ևում]
15. ') [կկանգնես]: Եվ դու կզնաս՝ զորքերը հավաքելու
16. ') [կզնաս]:
17. ') [Երկրն]երի զորքերը՝ Վերին երկրի, Իսխուպիտտա
 քաղաքի երկրի,
18. ') Սակադդունուվա [լեռ]ան երկրի, Սանախուիտտ[ա]
 քաղաքի երկրի,
19. ') [.....երկրի], Տուպացցիյա քաղաքի երկրի,
20. ') [Լախ]ուվացանաիյա [քաղաքի երկրի], Իսուվա
 քաղաքի երկրի,
21. ') [.....]: Եվ ինչ(պիսիք) որ կան, Վերին երկրի
22. ') [ջոկատ]ները, բոլորը շարժման մեջ դի[ր] (քառացիորեն՝
 «հավաքիր»):
23. ') [.....] հետո հանձնարարիր ե[րկր]ներից
24. ') [.....] ես կզամ: Ես՝ Արևս, կզրեմ:
25. ') [... ճա շ]արժմ[ան] մեջ կդնի: Դու նույնպես բռնիր:
26. ') [.....] Եվ մարդիկ
27. ') [.....ես] կու[ղարկեմ]:

Պարզաբանումներ տեքստին

ՀԿ, 2–5: Այս երեք տողերի իմաստը հետևյալն է.

Խեթական արքան Տապիզգայում գտնվող իր հասցեատի-
 րոջը տեղեկացնում է «Տապալիյայի եղբորը» տրված հանձնարա-

րության մասին: 4-5-րդ տողերում i(ya)- «գնալ» և tai- «դնել» բայերի հրամայական եղանակի եզ. II դեմքով կիրառությունը կարելի է մեկնաբանել երկակի. ա) այստեղ խեթական արքան վերաշարադրում է «Տապալիյայի եղբորը» տրված հրամանը, բ) Արքան արդեն դիմում է հասցեատիրոջը: Թերևս, ինչպես այս հատվածում, այնպես էլ մամակի վերջում, խոսքը «Տապալիյայի եղբոր» մասին է (տես ստորև):

5) Բառացիորեն՝ «(մրանց) տակ այդ գործը/բանը դիր»:

6) Իմաստը հետևյալն է. Վերին երկրում գորահավաքի հաջող անցկացման ողջ պատասխանատվությունը դրվում է հասցեատիրոջ (կամ «Տապալիյայի եղբոր») վրա:

25) ninink — «շարժման մեջ դնել, հավաք(ագր)ել» բայի կիրառությունը Ներկա ժամ. եզ. III դեմքով, որին հետևում է Եր-«բռնել» բայը՝ II դեմքով, կարող է վկայել այն մասին, որ արքայի հանձնարարությունը պիտի իրականացներ ոչ միայն հասցեատերը:

Նամակի էությունը

Արդյոք՝ մամակի կորսված մասը նույնպես պարունակել է գորահավաքին առնչվող հրահանգներ, ինչպիսիք առկա են տեքստի ՀԿ-ում պարզ չէ: Խեթական արքայի⁸ մամակի հասցեատերը Տապիգգայում գտնվող ոմն բարձրաստիճան պաշտոնյա է, որին (կամ մեկ այլ անձի) հանձնարարվում է գնալ Վերին երկիր և, բոլոր ջանքերը գործադրելով («երկրում երկու անգամ, երեք անգամ... երկրից զենք կբերես»), գորաջուկատներ հավաքագրել: Արդյոք՝ այդ նախապատրաստությունները նախատեսված էին դեպի Հայասա արշավանք կազմակերպելու համար⁹, թե ոչ, տեքստից չի պարզաբանվում: Հայասան «կարգի բերել» արտահայտությունը կարելի է մեկնաբանել և՛ որպես արշավանք, և՛ որպես այդ երկրում խեթական արքային գորք տրամադրելու ցանկության բացակայություն: Եթե խեթական պաշտոնյայի՝ Հայասա գնալու պատճառը երկրորդ միտքն է, ապա այնուամենայնիվ, Հայասայում, ի տարբերություն նրա հարավային հարևան Իսուվայի (Շուփը), խեթական արքայի գերիշխանությունը որոշակիորեն սասանված էր և կարիք կար տեղում ճնշում գործադրելու: Իսկ եթե խոսքը Հայասայի դեմ արշավանքի մասին է, ինչպես ենթադրում

են նամակը, այս կամ այն առիթով քննարկած մասնագետները, ապա պիտի եզրակացնել, որ տվյալ պարագայում գործ ունենք խեթա-հայասական հարաբերությունների վատթարացման մի հերթական վտույի հետ:

Նամակում չի պահպանվել Հայաստան տիրող խեթերի համար անբարենպաստ իրավիճակի պատճառով բացահայտող որևէ տեղեկություն: Ձորահավաքին վերաբերող տեքստի հատվածը երկու այլընտրական մեկնաբանությունների տեղիք է տալիս:

Եթե հետևենք խեթական արքայի հրահանգներին, ինչպես որ դրանք ներկայացված են, ապա կարելի է ենթադրել հետևյալը:

1) Խեթական պաշտոնյան սկզբում պիտի գործ հավաքեր Վերին երկրում, այնուհետև զնար Հայասա, հետո վերադառնար Տապիզգա (°), այնտեղից նոր գործ հավաքեր և սպասեր խեթական արքային:

2) ՀԿ-ի 7-9-րդ տողերում և 17-22-րդ տողերում խոսքը միևնույն գորահավաքի մասին է, ուղղակի երկրորդ անգամ գորահավաքի ենթակա երկրների անունները ավելի են մասնավորեցված:

Այս երկու հնարավոր տարբերակներից, մեր կարծիքով, նախապատվությունը պիտի տալ առաջինին, քանի որ ՀԿ 7-9-ում հիշատակվում է միայն Վերին երկիրը, իսկ հետո՝ երկրներ, որոնք ոչ միայն Վերին երկրում չէին գտնվում, այլև դրանից բավական հեռու էին (տես ստորև): Այս տարբերակի դեպքում Վերին երկրում անցկացվելիք գորահավաքի նպատակը կարող էր լինել հայասացիների վրա ճնշում գործադրելը միայն:

Ձորահավաքի աշխարհագրությունը

Նամակում հիշատակվող երկրները, որտեղից նախատեսվում էր գործ հավաքել, գտնվում են Խեթական տերության հյուսիսային, արևելյան և հարավային շրջաններում:

Իսխուպիտտա. վկայված է բազմաթիվ անգամներ, որպես քաղաք, որտեղից մշտապես խեթերը զինվորներ էին հավաքագրում¹⁰: Տեղադրվում է մոտավորապես Խաթթոասսից հյուսիս-արևելք՝ ժամանակակից Ամասիայի և Թուրխալի շրջանում, Տապիզգայից ոչ հեռու (դեպի հյուսիս)¹¹:

Իսուվա. Եփրատի և Արածանիի միախառնման շրջանում (հետագայի Շուփք):

Լա(սու)վացանտիյա. Լեռնային Կիլիկիայի կարևոր պաշտամունքային և տնտեսական կենտրոններից մեկը դեռ Աշշուրի առևտրական գաղութների շրջանից: Առաջարկվել են տարբեր իրարամերժ տեղադրություններ¹²:

Սակադդունուվա լեռ. Սակավաթիվ վկայությունները հուշում են, որ այիտի գտնվելը Տապիզգայից ոչ շատ հեռու, համեմայնդեպս, կասկական գոտում¹³:

Սանախուիտտա. Ընկած էր Ամասիայի և Սեբաստիայի միջև, ավելի ճշգրիտ տեղադրությունը հնարավոր չէ¹⁴:

Տուպացցիյա. Բացի Մաշատի նամակից, վկայված է երեք անգամ, որոնցից մեկում հիշատակվում է Տուվանուվա քաղաքի և Ամմունա լեռան մերձակայքում¹⁵: Ընդամին, տեղադրությունը Հալիսից հարավ՝ Ժաման. Բոր քաղաքի շրջանում, տրամաբանական է:

Վերին երկիր. Խաթթիի հյուսիս-արևելքում: Սահմանակից էր Հայաստանին: Ենթադրաբար, ընդգրկում էր Հալիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանը ընկած շրջանը, իսկ հյուսիսում հասնում էր Գալլ գետի (Լյուկոս) ավազան¹⁶:

Նկատի ունենալով վերոհիշյալ երկրների լայն աշխարհագրությունը, հնարավոր է ենթադրել, որ նամակի ետնախորքում ընկած իրադարձությունը բավական լուրջ է եղել, որը ստիպել է խեթական արքային գորաջոկատներ հավաքագրել երկրի ամենատարբեր շրջաններից:

Ժամանակը և պատմական ետնախորքը

Տապիզգայի արխիվի բոլոր 116 նամակների հնագրական վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք կազմված են Խեթական Նոր թագավորության գոյության վաղ շրջանում՝ մոտավորապես մ.թ.ա. 15-րդ դարի երկրորդ կեսին — 16-րդ դ. առաջին տասնամյակներում: Նամակների հրատարակիչը հակված է արխիվը թվագրելու Թուլիսալիյաս III-ի և Սուպալիլուլիմաս I-ի կառավարման շրջանով¹⁷: Նամակներում հիշատակվող անձնանունների համադրումը այլ տեքստերից հայտնի անձանց հետ, թույլ է տվել առաջարկելու քիչ ավելի վաղ թվագրություն (Թուլ-

խալիյաս I (II) և Արնուվանդաս I¹⁸: Հարկ է նշել, որ հնագրական հիմքի վրա տեքստերի ավելի ճշգրիտ թվագրումը անհնար է:

Ստորև փորձենք, նախկինում հայտնի տեքստերի օգնությամբ, Հայաստանի և Իսուվայի պատմությանն առնչել քննարկվող նամակը:

Թուղխալիյաս I (II)¹⁹ — Այս արքայի «Տարեգրություններում», խիստ վնասված ենթատեքստում, հիշատակվում է Իսուվայի նվաճումը²⁰: Ըստ տեքստի, խեթերի արշավանքի դրապատճառը Իսուվայի ապստամբությունն է եղել: Հայտնվում է նաև, որ իսուվացիներին օգնում էր Խուրրի երկրի (Սիտաննի) արքան: Այս նույն իրադարձության մասին է հաղորդվում Արնուվանդաս I-ի տարեգրության մեջ²¹: Թուղխալիյասի իսուվական արշավանքի մասին կարևոր մանրամասներ է պարունակում նրա և Կիցցուվատնայի արքա Սունաստուրայի միջև կնքված պայմանագրի՝ «պատմական ներածությունը»: Այստեղ նշվում է, որ առաջին արշավանքից հետո Խուրրիի արքան մտել է Իսուվա և ավերել դրա բնակավայրերը: Ավարտելով իր արշավանքը ուրիշ վայրում, Խեթական արքան վերանվաճել է Իսուվան: Ասվում է նաև, որ այդ իրադարձությունների ժամանակ իսուվացիների մի մասը հեռացել է Խուրրի երկիր և վերջինիս արքան հրաժարվել է նրանց վերադարձնել:

Թուղխալիյասի տեքստերում, Իսուվայից բացի, Հայկական լեռնաշխարհի որևէ այլ երկիր կամ բնակավայր անվանապես չի հիշատակվում, սակայն պետք է ենթադրել, որ նրա արշավանքները պիտի ներառեն նաև Իսուվայի հարևաններին, քանի որ այդպիսի տպավորություն է ստացվում Թուղխալիյասի որդու՝ Արնուվանդաս I-ի²³ տեքստերց:

Արնուվանդաս I. — Բացի այս արքայի տարեգրություններում Իսուվայի հիշատակությունից (տես վերը), Հայկական լեռնաշխարհի երկրների մի մեծ խումբ վկայված է մասնագիտական շրջանակներին վաղուց հայտնի KUB XXIII 72-ում (այսպես կոչված՝ «Պախխուվացի Սիտայի մեղանշանքը»)²⁴:

Ըստ դրա, վերինեփրատյան Պախխուվան երկար ժամանակ անհնազանդություն էր դրսևորել և նրա ղեկավարները (Ուսապա, Սիտա, Պիզզանա և այլն) ոչ միայն խախտել էին խեթական արքային տված լռյալության երդումը, այլև գրավել էին խեթական չորս քաղաքներ: Պախխուվան հնազանդեցնելու փորձե-

րից հետո խեթական արքան Խաթթուսաս եր կանչել վերինեփ-
րատյան երկրների ներկայացուցիչներին (տեքստում՝ «ավագ-
ներ»)։ Տեքստը իրենից ներկայացնում է արքայի վերջնագիրը
Պախխուվայի ավագներին նաև արևելյան երկրների հետ կնքվող
(ավելի ճիշտ՝ թարմացվող) «կռելկտիվ լոյալության պայմանագ-
րով»²⁵։ Հետևաբար, քանի որ վերինեփրատյան երկրները պայմա-
նագրի թարմացման պահին դիտվել են որպես Խաթթիից կախյալ,
ապա պիտի նվաճված լինեին դեռ Թուդխալիյասի օրոք²⁶։

KUB XXIII 72-ում Հայասան կամ Ազգին անվանապես չեն
հիշատակվում, սակայն տեքստում հանդես են գալիս որոշ քա-
ղաքներ, որոնք քիչ ավելի ուշ շրջանի աղբյուրից հայտնի են որ-
պես այդ երկրի բնակավայրեր։

Այսպես, Դուգգամայից ոմն Աիսսի հանդես է գալիս որպես
Պախխուվայի հետագա լոյալության երաշխավոր՝ Պիտտիյարի-
գայից Արխսայիցցիի և մեկ այլ քաղաքից (անվանումը չի պահ-
պանվել) Ալի-[...]յի հետ միասին²⁷։

Համաձայն տեքստի, Պախխուվայի հակախեթական գոր-
ծունեության շրջանում նրա դաշնակիցը Արխսիտան էր։ Վերջին-
ներս հարձակվել էին Կումմախայի բնակավայրերի վրա, և խե-
թական զորքի հարձակման ընթացքում ապաստանել Պախխու-
վայում²⁸։ Վաղուց հայտնի մի տեքստում (KUB XXVI 39), որը
ներկայացնում է (առայժմ չթվագրված) խեթա-հայաստական ինչ-
որ պայմանագրի կնքմանը վկա աստվածների ցուցակը²⁹, Հայա-
սայի աստվածների շարքում հիշատակվում է «Արխսիտա քաղաքի
Ամարտայի աստվածը» («Մ takšannas»)։ Այս վկայության հիման վրա
դժվար չէ ենթադրել, որ Արխսիտան Հայասայի քաղաքներից մեկը
պիտի լիներ։ Ինչ վերաբերում է Կումմախային, ապա սա այն
վայրն էր, որտեղ Թուդխալիյաս III-ը իր որդի Սուպպիլուլիումա-
սի հետ միասին ճակատամարտ էր տվել Հայասայի արքա Կա-
րաննիսի դեմ³⁰։

Վերոհիշյալ երեք քաղաքների հիշատակությունը Արնու-
վսինդաս I-ի օրոք՝ Հայասա կամ Ազգի ներկրանվան բացակայու-
թյան պայմաններում, կարող է վկայել հոգուտ հետևյալ ենթադ-
րության.

Արնուվանդասի օրոք (համեմայնդեպս, KUB XXIII 72-ի
կազմման պահին) հետագայի հայասական տարածաշրջանը
դեռևս քաղաքականապես միավորված չէր և իրենից ներկայաց-

նում էր ինքնուրույն քաղաքական միավորներ: Ի ապացույց այս ենթադրության՝ կարելի է վկայակոչել կրկին նույն KUB XXIII 72-ում արտացոլված իրականությունը:

Տեքստում Արիփտան և Կումմախսան հանդես են գալիս որպես հակառակորդ կողմեր: Իսկ Դուգգաման, ի տարբերություն վերինեփրատյան երկրների մեծ մասի, խեթերի կողմից դիտվում էր որպես առավել վստահելի (ինչպես և Պիտտիյարիզան): Այսինքն, սույն ժամանակահատվածում հետագայի Հայասա պետության տարածքում գոյություն ունեցող մանր քաղաքական միավորների միջև պայքար էր ընթանում, որն, ի վերջո, արդեն Թուդխալիյաս III-ի օրոք (կամ նույնիսկ Արնուվանդաս I-ի կառավարման վերջերին) պիտի հանգեցներ Հայասայի ձևավորմանը:

Թուդխալիյաս III — Այս արքայի կառավարման շրջանի վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուրները երկուսն են՝

1. Մուրսիլիս II-ի՝ հոր (Մուպպիլուլիմաս I) գործունեության մասին պատմող տեքստերը (տես վերը, ծանոթ. 30).
2. Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված KBo VI 28-Á³¹, որը հիշատակում է Խաթթիի վրա բոլոր հարևան երկրների հարձակում:

Առաջինում Հայասան անվանապես հիշատակվում է որպես թշնամական երկիր, որի դեմ խեթական արքան մի շարք պատերազմներ է մղել³²: Երկրորդում վկայակոչվում է Ազգիի հարձակումը, որի ժամանակ վերջինս գրավել էր Վերին երկիրը և Սամուխան սահման դարձրել Խաթթիի և իր միջև³³:

Այսպիսով, Թուդխալիյաս I (II)-ի, Արնուվանդաս I-ի և Թուդխալիյաս III-ի ժամանակներից մեզ հասած տեքստերը թույլ են տալիս ենթադրելու, որ Հայասա պետության կազմավորումը պիտի տեղի ունենար Արնուվանդաս I-ի և Թուդխալիյաս III-ի կառավարման շրջանի ինչ-որ մի ոչ մեծ ժամանակահատվածում (KUB XXIII 72-ից մինչև Թուդխալիյասի առաջին հայասական արշավանքը՝ Կումմախսայի ճակատամարտը):

Վերադառնալով քննարկվող նամակին, կարելի է ամփոփել դրա թվագրման խնդիրը:

Նամակում Հայասայի հիշատակությունը, վերը բերված փաստարկների ճնշման տակ, վկայում է հօգուտ KUB XXIII 72-ից հետո ընկած ժամանակաշրջանով: Այն կարող էր կազմվել Ար-

նուվանդաս I-ի կառավարման վերջին շրջանում կամ Թուդխալի-յաս III-ի օրոք: Եթե նկատի ունենանք, որ, ըստ KBo VI 28-ի, Թուդխալիյաս III-ի կառավարման վերջին շրջանում, Իսուվան ակնհայտորեն Խաթթիի հակառակորդներից էր (Իսուվայի կողմից Եփրատից արևմուտք՝ մինչև Թեգարամա նվաճումը), ապա նամակի առաքման ժամանակը կարող է ավելի սեղմվել:

ARAM KOSSYAN

NEW DATA ABOUT THE INTERRELATIONS BETWEEN THE HITTITE EMPIRE AND THE COUNTRIES OF THE ARMENIAN HIGHLAND

During the 1970's excavations at Ma^a at Höyük (about 30km to the south-east of Zile, Central Asia Minor) was unearthed a significant archive containing more than 100 letters written in Hittite cuneiform script. Among these letters one — Ma^a at N. 96, refers to two political entities of the Armenian Highland — Hayasa and Isuwa. The paper represents a full publication of this letter with historical commentaries.

The discussion of the new data in combination with the already known Hittite texts leads to the next conclusions:

The letter should be dated with the late reign of Arnuwandas I or Tudhaliyas III (approx. late XV — early XIV c. B.C., thus fixing the terminus ante quem for the rise of Hayasa).

To that date Isuwa, unlike Hayasa, was regarded (at least formally) as loyal to the Hittites. The purpose of Ma^a at N. 96, most probably, though not necessarily, was the forthcoming campaign into Hayasa.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսպես, օրինակ, KUB XXIII 72 («Պախիտավադի Միտան»՝ O.R.Gurney, Mita of Pahhuwa, "Liverpool Annals of Archaeology and Anthropology", v. 28, 1948, pp. 32ff.), «Պայմանագիր Սուպիլիուլումաս I-ի և Խուկկանայի միջև» (J.Friedrich, Staatsverträge des Hatti-Reiches, II, Leipzig, 1930, S. 103ff.), Մուրսիլիս II-ի «Տարեգրությունները» (A.Götze, Die Annalen des Muršiliš, Leipzig, 1937) և այլն:
2. Օրինակ, KUB XL 10-ը և դեռևս ինքնագիր եղանակով չհրատարակված 1684/ւ-ն (H.A.Hoffner, A Join to the Hittite Mita text, "Journal of Cuneiform Studies", 28, 1976, pp. 60ff.; H.Otten — Chr.Rüster, Textanschlüsse und Dublikate von Bogazköy-Tafeln (41-50), "Zeitschrift für Assyriologie", 67, 1977, S. 53f.), որոնք միանում են KUB XXIII 72-ին:
3. Մաշառ-հյույութից՝ Ջիլեից 30 կմ. հարավ-արևմուտք (= խեթ. Tapigga), Օրթաքյոյից՝ Չորումից 50 կմ. հարավ-արևելք (= խեթ. Sapinuwa), Կուշակլի՝ Հալիսի մեծ ոլորանի շրջանում՝ Ալիշարի մոտ (= խեթ. Sarışsa; O. Գըրնիի կարծիքով՝ Zippalanda, The Hittite Names of Kerkenes Dağ and Kuşaklı Höyük,

- "Anatolian Studies" 45, 1995, pp. 69ff., որը սակայն կարճ ժամանակում ժխտվեց այս արխիվի նյութերի հիման վրա):
4. G.Wilhelm, Kuşaklı-Sarissa. Keilschrifttexte aus Gebäude A, Rahden/Westf., 1997; Օրթաքյոյի շուրջ 3.000 տեքստերից առայժմ հրատարակվել է միայն մեկը (A.Süel, Ortaköy: Eine hethitische Stadt mit hethitischen und hurritischen Tonfalentdeckungen. — In: "Hittite and other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp" (eds. H.Otten et al.), Ankara, 1992, S. 487ff.) Մաշատի արխիվի հրատարակությունը տես ստորև:
 5. Նույնացումը ըստ արխիվի հրատարակչի՝ S.Alp, Die hethitischen Tonfalentdeckungen auf dem Maşat-Höyük, "Belleten" XLIV/173, 1980, S. 58f.
 6. Առաջին հրատարակության մեջ ներառված են միայն առավել լավ պահպանված նամակները:
 7. S.Alp, Hethitische Briefe aus Maşat-Höyük, Ankara, 1991, S. 298ff.
 8. Ըստ հրատարակչի, նամակագիրը խեթական արքան է (S.Alp, Hethitische Briefe, S. 299 Anm. 518):
 9. Այդպես է մեկնաբանվել նամակի համապատասխան հատվածը (R.Beal, The Organization of the Hittite Military, "TdH" 20, Heidelberg, 1992, p. 88; Ph. H.J.Hauwink ten Cate, The alternative date for the "Šunaššura treaty" (Kbo I 5), "Altorientalische Forschungen", Bd. 25, 1998/1, s. 52):
 10. Այս հարցի շուրջ գրավոր վկայությունների համար տես R.Beal, loc. Cit., pp. 80ff.; ըստ նույն աղբյուրների, Իսխտալիտտայի զինվորների մի խումբ մշտապես տեղակայված էր Տապիզգայում:
 11. F.G.del Monte and J.Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, S. 146f. (այսուհետև՝ RGTC).
 12. Օրինակ, Մալաթիայից արևմուտք՝ ժաման. Էրիստան քաղաքի մոտ (J.Lewy, Old Assyrian Evidence Concerning Kussara and its Location, "Hebrew Union Collage Annual" 33, 1962, p. 52; P.Garelli, Les Assyriens en Cappadoce, Paris, 1963, p. 106, 111f.), Մաշատ-Կալսերի ճանապարհի վրա (A.Geotze, Rez.: J.Garstang and O. R.Gurney, The Geography of the Hittite Empire, London, 1959, "Journal of Cuneiform Studies" 14, 1960, p. 51f.) և այլն:
 13. Վկայված է նաև Šakdunuwa ~ Šakudunuwa ձևերով (KUB II 2 III 1; KUB XXXVIII 12 I 24):
 14. RGTC, S. 342.
 15. KUB XIX 18 I 11', 14'. Stb Fr. Cornelius, Geschichte der Hethiter, Darmstadt, 1973, S. 142; S. Alp, Hethitische Briefe, 1991, S. 45.
 16. RGTC, S. 293f.
 17. S. Alp, "Belleten" XLIV, 1980, S. 58.: Այս կարծիքին է նաև Ֆ. Հոուլինք տեղ Կատեն ("Altorientalische Forschungen", Bd. 25, 1998/1, p. 52):
 18. J.Klengel, Das Corpus der Maşat- Briefe und seine Beziehungen zu den Texten aus Hattuša, "Zeitschrift für Assyriologie" 85, 1995, S. 74ff.
 19. Մասնագետների շրջանում դեռևս ընդհանուր կարծիք չկա Վաղ կայսրության առաջին արքաների հաջորդականության հարցում:

- Մասնավորապես, պարզ չէ, թե արդյոք այս Թուդխալիյասը այդ անունը կրող առաջին արքան է (հետևաբար, նաև նոր արքայատոհմի հիմնադիրը), թե ոչ:
20. KUB XXIII 11/12 Rev. 27'–34' (հրատարակությունը՝ O.Carrufa, Beiträge zur mittelhochhittitischen Geschichte. I, "Studi Micenei ed Egeo-Anatolici" XVIII, 1977, S. 161ff.):
 21. KUB XXIII 14 Vs. 1–8 (O. Carruba, loc. Cit., S. 172):
 22. E.Weidner, Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923, N. 7, S. 88ff.; նաև G. Beckman, Hittite Diplomatic Texts, Atlanta, 1999 (II հրատ.), N. 2, p. 13ff. (թարգմ.):
 23. Արմուվանդասը Թուդխալիյասի որդին չէր, այլ որդեգիրը՝ Թուդխալիյասի և թագուհի Նիկալմատիի դուստր Ասմունիկալի ամուսինը, որը արդեն Թուդխալիյասի օրոք գահակից էր հայտարարվել (R. Beal, Studies in Hittite History, "Journal of Cuneiform Studies" 35, 1983, pp. 115ff.):
 24. Տես վերը՝ ծանոթ. 1–2:
 25. KUB XXIII 72–ի գիտական հրատարակությունը և դրանում արտացոլված իրադարձությունները ամփոփված են հատուկ ուսումնասիրության մեջ և արդեն պատրաստ են հրատարակության:
 26. Ph. H.J.Houwink ten Cate, The Records of the Early Hittite Empire (c. 1450–1380), Leiden, 1970, p. 62:
 27. Rev. 1.
 28. Obv. 43 " Rev. 16f.
 29. E.Forrer, Hajasa–Azzi, "Caucasica" IX, 1931, S. 6.
 30. H.G.Göterbock, The Deeds of Suppiluliumas, as told by his son Mursili II, "Journal of Cuneiform Studies" X, 1956, fragm. 13, 40ff.
 31. Այսպես կոչված "concentric invasion"–ը (տեքստի համապատասխան հատվածը տես՝ A.Geotze, Kizzuwatna and the problem of Hittite Geography, New Haven, 1940, p. 21ff.):
 32. H.G.Göterbock, loc., cit., fragm. 2, 10, 13.
 33. Kbo VI 28, 11f.